Հավելված
ՀՀ վարչապետի 2011 թ.
հունիսի 17 -ի N 554 - Ա
որոշման

# Ժ Ա Մ Ա Ն Ա Կ Ա Ց ՈՒ Յ Ց

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԵՎ ԵՎՐՈՊԱԿԱՆ ՄԻՈՒԹՅԱՆ ՄԻՋԵՎ ԽՈՐԸ ԵՎ ՀԱՄԱՊԱՐՓԱԿ ԱԶԱՏ ԱՌԵՎՏՐԻ ՀԱՄԱՁԱՅՆԱԳՐԻ ԲԱՆԱԿՑՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԵԿՆԱՐԿԻ ԱՊԱՀՈՎՄԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼԻՔ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| Հիմնական գերակայությունները | Իրականացվելիք միջոցառումները | Պատասխանատու մարմինը | Ժամկետը |
|---|---|---|---|
| **Առևտրի տեխնիկական խոչընդոտներ (ԱՏԽ)** | | | |
| 1. *Օրենսդրական դաշտի հետ կապված՝* <u>*ա. մշակել, ընդունել, իրականացնել կառավարական ծրագիր*</u>՝ տեխնիկական կանոնակարգումների և արդյունաբերական արտադրանքների ստանդարտների ոլորտներում Հայաստանի օրենսդրությունը ԵՄ acquis մոտարկման նպատակով, ինչպես նշված է ԳՀՀ-ում և ԵՀՔ գործողությունների ծրագրում, կենտրոնանալով, մասնավորապես, արտադրանքի անվտանգության և որակի ապահովման ԵՄ օրենսդրության վրա | 1. Ապահովել առաջընթաց ՀՀ որակի ենթակառուցվածքների բարեփոխման ռազմավարության և նրա գործողությունների ծրագրի իրականացման ուղղությամբ, մասնավորապես, սույն ժամանակացույցի ԱՏԽ ոլորտին վերաբերող հատվածում սահմանված գործողությունների իրականացման միջոցով | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | |
| | 2. Մշակել «Ստանդարտացման մասին», «Հավատարմագրման մասին», «Տեխնիկական կանոնակարգման մասին», «Չափումների միասնականության ապահովման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքների նախագծերը և դրանք սահմանված կարգով ներկայացնել հաստատման՝ ներառելով արտադրանքի անվտանգության և պատասխանատվության ԵՄ-ի դրույթները | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | |

| | | | |
|---|---|---|---|
| բ. նշված ծրագրի մշակման և իրագործման շրջանակներում, *մասնավորապես, ճշտել ընտրված առաջնային ճյուղերին, արտադրանքներին վերաբերող ԵՄ-ի օրենսդրությունը և սկսել մոտարկման աշխատանքներ*<br><br>*2. Ինստիտուցիոնալ դաշտի հետ կապված՝*<br><br>*ա. ապահովել առաջընթաց ազգային ինստիտուցիոնալ համակարգի աշխատանքային զարգացման ուղղությամբ* տեխնիկական կանոնակարգման, ստանդարտացման, հավատարմագրման, հավաստագրման, չափագիտության, համապատասխանության գնահատման և շուկայի վերահսկման ոլորտներում: Անհրաժեշտության դեպքում ստեղծել կամ հզորացնել նշված ոլորտների համար պատասխանատու առկա ինստիտուտները: Մասնավորապես, ապահովել առկա ստանդարտացման և հավատարմագրման մարմինների քաղաքական անկախությունը | 3.1. Հստակեցնել ԵՄ-ի մակարդակում կանոնակարգվող արդյունաբերական ճյուղերը՝ ռազմավարությամբ նախատեսված ՀՀ կառավարության ծրագրի հիման վրա այդ ճյուղերի՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը եվրոպական փորձին մոտարկելու նպատակով՝ շեշտադրելով տնտեսական առումով ամենակարևոր ճյուղերը<br><br>3.2. Մշակել և հաստատել նախատեսված ՀՀ կառավարության ծրագիրը՝ այդ մոտարկումն աստիճանաբար իրականացնելու նպատակով<br><br>3.3. Սկիզբ դնել ծրագրի իրականացման մեկնարկին | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br><br>ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br><br>ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br><br>ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն | |
| | 4.1. Որակի ենթակառուցվածքի ազգային ինստիտուցիոնալ համակարգի համար ձևավորել կամ մշակել արդյունավետ գործող և անկախ հաստատություններ, մասնավորապես, հավատարմագրման, ստանդարտացման, չափագրման, համապատասխանության հավաստման և շուկայի վերահսկողության ոլորտներում<br><br>4.2. Որտեղ անհրաժեշտ է՝ ուսումնասիրել և հստակեցնել նշված կառույցների ինստիտուցիոնալ կառուցվածքի և գործառույթների թերությունները («բացերի վերլուծություն/գնահատում») և ապահովել առաջընթաց նշված բացերի վերլուծության/գնահատման վերաբերյալ առաջարկությունների իրականացման ուղղությամբ<br><br>4.3. ԱՏԽ-ի ոլորտում ներգրավված հաստատությունների համար պետական կառավարման մարմինների զարգաց- | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | |

| | | | |
|---|---|---|---|
| | ման համապարփակ ծրագրի (CIB) շրջանակներում մշակել ԱՏԽ-ի ինստիտուցիոնալ բարեփոխման պլան և Ինստիտուցիոնալ բարեփոխումների ծրագրեր (ԻԲԾ), որոնք ուղղված կլինեն վերջիններիս հզորացմանը և նրանց ինստիտուցիոնալ և վարչական կարողությունների զարգացմանը, մասնավորապես, գործնականում նրանց քաղաքական անկախության հիմման միջոցով, և որոնք կհստակեցնեն ֆինանսավորման աղբյուրներն ու իրականացման ժամանակացույցը<br>Իրականացնել այս ծրագրերով նախատեսված նախնական գործողությունները (*շրջանակները կսահմանվեն ծրագրերով*) | | |
| **Սանիտարական և բուսասանիտարական միջոցներ (ՍԲՍ)** | | | |
| <u>*3. Մշակել և սկսել իրականացնել սննդի անվտանգության կյուռ և գործուն համակարգի ստեղծման համապարփակ ռազմավարություն*</u><br>Մասնավորապես, պետք է հասցեագրվեն հետևյալ խնդիրները՝<br>ա. մշակել, ընդունել և կիրարկել օրենսդրական բացերը<br>բ. բարելավել SPS միջոցառումների իրականացումն ու կիրարկումը և ընդհանուր համակարգը դարձնել ավելի արդյունավետ, մասնավորապես, հստակորեն սահմանելով լիազոր մարմինների պատասխանատվությունները և վերացնելով առկա կրկնօրինակումները<br>գ. համապատասխան ինստիտուտների (լիազոր մարմինների) հզորացում կամ, | 5. Ավարտել Հայաստանի Հանրապետության սննդամթերքի անվտանգության համակարգի զարգացման ռազմավարության, նրա գործողությունների ծրագրի մշակման աշխատանքները և ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը<br>Ռազմավարությունը/Գործողությունների ծրագիրը պետք է ապահովի<br>5.1. Հայաստանի Հանրապետության օրենսդրությունը ԵՄ-ի՝ սննդամթերքի անվտանգությանը վերաբերող օրենսդրության (EU aquis) հետ մոտարկելու ծրագիր՝ մասնավորապես, կենտրոնանալով սննդամթերքի անվտանգության հորիզոնական օրենսդրության (EU aquis) վրա<br>5.2. նախատեսվող օրենսդրությամբ հստակորեն սահմանել իրավասու մարմինների համապատասխան պարտականությունները և խնդիրները՝ վերացնելով հնարավոր կրկնությունները<br>5.3. ստեղծել (անհրաժեշտության դեպքում) և հզորացնել համապատասխան հաստատությունները, այդ թվում՝ ֆի- | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br><br>ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն | |

| | | | |
|---|---|---|---|
| անհրաժեշտության դեպքում, ստեղծում ֆինանսավորման բարձրացման և ուսուցման միջոցով<br><br>դ. մշակել հազեցված մասնագիտաց-ված հավատարմագրման լաբորատորիաների ցանց (այդ թվում՝ ռեֆերենտ լաբորատորիաներ) | նանսավորման և բարելավված ուսուցման ընդլայնման միջոցով<br>5.4. մշակել/նախագծել սարքավորումներով հագեցած մասնագիտացված հավատարմագրված լաբորատորիաների ցանց (այդ թվում՝ ռեֆերենտ լաբորատորիաներ)<br>6. Առաջընթաց ապահովել Սննդամթեքի անվտանգության ռազմավարության/ գործողությունների ծրագրի իրականացման ուղղությամբ, հատկապես, օրենսդրական մոտարկման և ինստիտուցիոնալ համակարգի զարգացման (ներառյալ մասնագիտացված լաբորատորիաները) ուղղություններով: Այս գործողությունները պետք է ներառեն հետևյալը՝<br><br>6.1. մշակել և ընդունել (խորհրդարանի կողմից) մոտարկված օրենսդրությունը<br><br>6.2. ընդունված օրենսդրության հիման վրա ստեղծել և (կամ) վերակազմավորել իրավասու մարմինները և նրանց վրա դնել Ռազմավարության և Գործողությունների ծրագրով նախատեսված պարտականություններն ու խնդիրները<br><br>6.3. հզորացնել իրավասու մարմինների կարողությունները, այդ թվում՝ ֆինանսավորման և բարելավված ուսուցման ընդլայնման միջոցով<br><br>6.4. հզորացնել հաստատությունների կարողությունները՝ մասնավորապես, արդյունավետ դարձնելով առկա համարժեք ֆինանսավորումը, աշխատակազմը և հմտությունները: Անհրաժեշտության և նպատակահարմարության դեպքում համալրել լրացուցիչ աշխատողներով: Մշակել ուսուցման դասընթացներ և արդյունավետորեն իրականացնել դրանք աշխատողներով և այլ շահագրգիռ մարմինների համար<br><br>6.5. ավարտել Պետական կառավարման մարմինների զար- | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br><br>ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայություն<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն | |

| | | | |
|---|---|---|---|
| | գացման համապարփակ ծրագրի շրջանակներում (CIB) ՍԲՍ-ի ոլորտի Ինստիտուցիոնալ բարեփոխման ծրագրի մշակման աշխատանքները<br><br>6.6. բարելավել սննդամթերքի արտադրությամբ և մշակմամբ զբաղվող հաստատությունների նկատմամբ պետական վերահսկողությունը<br><br>6.7. մշակել/նախագծել սարքավորումներով հագեցած մասնագիտացված հավատարմագրված լաբորատորիաների ցանց (այդ թվում՝ ռեֆերենտ լաբորատորիաներ) և ձեռնարկել գործնականում այդ ցանցի ձևավորման ուղղությամբ առաջին քայլերը | | |
| **Մտավոր սեփականության իրավունքներ (ՄՍԻ)** | | | |
| 4. Ապահովել շոշափելի առաջընթաց ԳՀՀ և ԵՀՔ գործողությունների ծրագրի համապատասխան դրույթների իրականացման գործում, որը նպատակ կունենա մեծապես բարելավելու մտավոր սեփականության իրավունքի առկա օրենսդրության իրականացումն ու կիրարկումը, հատկապես, ծովահենության և կեղծարարության դեմ պայքարի հետ կապված հարցերում: Նման առաջընթաց պետք է ապահովվի, մասնավորապես, հետևյալի միջոցով՝<br><br>ա. կիրարկման պատասխանատու օղակների կարողությունների զարգացում<br><br>բ. դատական համակարգի գործունեու- | 7. Ավարտել Մտավոր սեփականության իրավունքների ռազմավարության¸ նրա գործողությունների ծրագրի մշակման աշխատանքները և ներկայացնել Հայաստանի Հանրապետության կառավարության հաստատմանը | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | |
| | 8. Ապահովել կեղծարարության և հենության օբսերվատորիայի կանոնավոր հանդիպումները և նրա լիարժեք գործունեությունը | ՀՀ կառավարության աշխատակազմ<br><br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | |
| | 9. Մեկնարկել ՄՍԻ Ռազմավարության և գործողությունների ծրագրի իրականացումը և առաջընթաց արձանագրել այդ ուղղությամբ: Իրականացվելիք կոնկրետ գործողությունները կսահմանվեն այդ փաստաթղթերի հիման վրա՝ դրանց ամբողջականացման և հաստատման արդյունքում: Դրանք, մասնավորապես, պետք է ներառեն հետևյալ գործողությունները՝ | ՀՀ կառավարության աշխատակազմ<br><br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br><br>ՀՀ կառվարությանն առընթեր պետական | |

| | | | |
|---|---|---|---|
| թյան բարելավում<br><br>գ. մտավոր սեփականության իրավունք ունեցողների հետ արդյունավետ երկխոսության ապահովում, ինչպես նախատեսվում է ԵՀՔ-ի գործողությունների ծրագրով: | 9.1. մեծացնել/հզորացնել ՄՍԻ պաշտպանության և կիրարկման համար պատասխանատու մարմինների լիազորությունները/իրավասությունները և վարչական կարողությունները<br><br>9.2. բարելավել դատական համակարգի գործառնությունը<br><br>9.3. արդյունավետ երկխոսություն ձևավորել իրավատերերի հետ՝ համաձայն ԵՀՔ-ի գործողությունների ծրագրի<br><br>Սույն աղյուսակի հաջորդ կետերով նախատեսված գործողությունները ենթակա են լրամշակման՝ ապագա Ռազմավարության և Գործողությունների ծրագրին համապատասխան | եկամուտների կոմիտե<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ գլխավոր դատախազություն (համաձայնությամբ) | |
| | 10. Բարելավել ՄՍԻ մաքսային գրանցամատյանում ՄՍ օբյեկտների գրանցումների կատարումը, հատկապես, դիմումները ներկայացնելու ընթացակարգերի պարզեցման և Հայաստանի Հանրապետության կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի և ՄՍԻ գործակալության ինտերնետային կայքերում Հայաստանի Հանրապետության կառավարության առաջնայնությունների մասին տեղեկատվության տեղադրման միջոցով | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե<br><br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | |
| | 11. Մշակել և գործնականում ներդնել առգրավված ապրանքների պահեստավորման և ոչնչացման հստակ ընթացակարգեր | ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն | |
| | 12. Մշակել և ներդնել կեղծ և հենված ապրանքների հայտնաբերման և բացահայտման թափանցիկ և արդյունավետ ընթացակարգեր, ինչպես նաև սահմանել և կիրառել համարժեք պատժամիջոցներ՝ կեղծարարության և հենության համար | ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե<br><br>ՀՀ արդարադատու- | |

| | | | |
|---|---|---|---|
| | | թյան նախարարու-<br>թյուն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ գլխավոր դատա-<br>խազություն (համաձայնությամբ) | |
| | 13. ՄՍԻ գործակալության ներքո ստեղծել մտավոր սեփա-կանության պաշտպանության ոլորտի դատական ակտերի տվյալների բազա, որն անհատույց հասանելի կլինի հան-րությանը | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն | |

| | | | |
|---|---|---|---|
| | 14. Կազմակերպել սեմինարներ և ուսուցման դասընթացներ հետևյալ նպատակներով՝<br><br>14.1. մտավոր սեփականության իրավունքը կրողների շրջանում մեծացնել իրազեկությունը ՄՍԻ պաշտպանության և կիրարկման վերաբերյալ<br><br>14.2. զարգացնել ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանության և ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտեի համապատասխան աշխատողների մասնագիտական հմտությունները և կարողությունները ՄՍԻ հարցերի վերաբերյալ<br><br>14.3. զարգացնել դատավորների հմտությունները և կարողությունները ՄՍԻ հարցերի վերաբերյալ | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն | |
| | 15. Մշակել և իրականացնել ՄՍԻ հանրային իրազեկման քարոզարշավ | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն | |

| | | | |
|---|---|---|---|
| | 16. Եվրոպական խորհրդին և Արտաքին հարաբերություն-ների ծառայությանը ներկայացնել *<u>սպույգ վիճակա-գրություն նախաձեռնված կիրարկմանը վերաբերող</u> գործո-ղությունների վերաբերյալ, մասնավորապես՝*<br><br>16.1. ստուգումների, հենության դեպքերի և կեղծված առ-գրավված ապրանքների թվի աճի (այդ թվում՝ սահման-ներում)<br><br>*16.2. ՄՍԻ ոլորտում դատական դեպքերի թվի աճի (քա-ղաքացիական և քրեական)*<br><br>*16.3. ՄՍ իրավունքի խախտման բացահայտված գրանց-ված դեպքերի աճի (այդ թվում՝ սահմաններում)*<br><br>*16.4. ոչնչացված ապրանքների թվի աճի*<br><br>*16.5. հանրային իրազեկման քարոզարշավների մեկնար-կի և իրականացման, ինչպես նաև իրավապահ մարմին-ների համար կազմակերպվող ուսուցման դասընթացների թվի աճի*<br><br>*16.6. իրավատերերի հետ ամրապնդված երկխոսության*<br><br>*16.7. ՄՍ ոլորտում վիճակագրության արժանահավատու-թյան բարելավման <u>կամ խնդրի լուծմանը հասնելու և չափորոշելու այլընտրանքային այլ ձևեր/միջոցներ</u>*՝ ցույց տալու ՄՍԻ պաշտպանության և կիրարկման ոլորտում Հա-յաստանի ունեցած շոշափելի առաջընթացը | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե<br><br>ՀՀ արդարադատու-թյան նախարարու-թյուն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ գլխավոր դատա-խազություն (համաձայնությամբ) | |
| **Ընդհանուր խնդիրներ /ընդհանուր համակարգում** | | | |
| *<u>5. Ստեղծել կառավարական ինստիտու-ցիոնալ թափանցիկ և գործուն կառույց-</u>* | 17. Նշանակել ԽՀԱԱՀ-ի բանակցային գործընթացի տեխնի-կական համակարգող/կոնտակտային կետ: ԽՀԱԱՀ-ի բա- | ՀՀ էկոնոմիկայի | |

| | | | |
|---|---|---|---|
| <u>ներ</u>՝ ԽՀԱԱՀ-ի հնարավոր ապագա բանակցությունների համար և Եվրոպական հանձնաժողովի ծառայություններին տեղեկացնել այդ կառույցների կառուցվածքի, անդամակցության, լիազորությունների և ընթացակարգերի վերաբերյալ: Սա կարող է ներառել հետևյալ գործողությունները՝<br>ա. նշանակել կառավարական մարմին, որը համապատասխան խնդիրների վերաբերյալ որոշումներ ընդունելու միջոցով պատասխանատու կլինի հնարավոր ապագա բանակցությունների քաղաքական համակարգումն ապահովելու համար<br>բ. ապահովել, որ նախորդ կետում նշված կառավարական մարմինը, բանակցային գործընթացի մասնակից այլ նախարարությունների և գերատեսչությունների նկատմամբ ունենա բավարար քաղաքական կշիռ, որպեսզի, ըստ անհրաժեշտության, կարողանա պահանջել որոշակի գործողությունների կատարում կամ իրականացնել արբիտրաժի գործառույթներ | նակցային գործընթացում ԵՄ-ի կողմի հետ կապն ապահովելու համար համակարգող/ կոնտակտային կետը կարող է լինել մեկ անձ կամ 2-3 անձից բաղկացած փոքր թիմ, որոնք կօգտագործեն մեկ միասնական էլեկտրոնային հասցե | նախարարություն | |
| | 18. ՀՀ էկոնոմիկայի նախարարությունում ստեղծել տեխնիկական համակարգողին աջակցող արդյունավետ թիմ, մասնավորապես՝<br>18.1. զգալիորեն ավելացնելով Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարության ԵՄ-ի հետ համագործակցության վարչության աշխատողների թիվը՝ անգլերենի ազատ իմացությամբ (ներառյալ տեխնիկական տերմինաբանությունը), ԵՄ-ի և միջազգային առևտրին վերաբերող հարցերով բարձր որակավորում և փորձ ունեցող մասնագետներով<br>18.2. ապահովելով աջակցող թիմի ներսում հարթ և արդյունավետ համագործակցությունը, հատկապես, տեղեկատվության հոսքը և փոխանակությունը | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | |
| գ. նշանակել գլխավոր բանագնաց և ստեղծել թիմ/աշխատանքային խումբ՝ նրա ղեկավարությամբ՝ ԽՀԱԱՀ-ի բոլոր ոլորտների մասնագետների մասնակցությամբ: Նախընտրելի է, որ փորձագետները չլինեն միայն ՀՀ էկոնոմիկայի նախարարության, այլ նաև այլ նախարարությունների և գերատեսչությունների | 19. ԽՀԱԱՀ-ի բանակցային գործընթացի յուրաքանչյուր ոլորտի համար սահմանել՝<br>19.1. սահմանել մարմին, որն առաջնորդելու է տվյալ ոլորտի բանակցային գործընթացը<br>19.2. հստակեցնել այն մարմինները, որոնք մասնակցելու են այդ ոլորտի բանակցային գործընթացին՝ ապահովելով ոլորտի բոլոր իրավասու մարմինների ամբողջովին ներ- | ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | |

| | | | |
|---|---|---|---|
| պաշտոնյաների կազմից, ովքեր, ներգրավված լինելով հնարավոր ապագա բանակցություններում, կարող են ավելի գործուն մասնակցություն ունենալ հետագայում ԽՀԱԱՀ-ի ներքո ստանձնած պարտավորությունների կատարման գործին: Լիարժեք և աշխատանքային լավ հիմքերի վրա դրված թիմի ստեղծումն առաջարկվում է արդեն իսկ նախապատրաստական գործընթացի փուլում, քանի որ սա հնարավորություն կստեղծի հետագայում պաշտոնական բանակցություններին մասնակից աշխատողների աշխատանքային պատրաստականության մակարդակի բարձրացման համար<br><br>դ. նշված թիմի կազմում նշանակել տեխնիկական մակարդակի աշխատող, ով կապող օղակ կհանդիսանա հնարավոր ապագա բանակցությունների ընդհանուր համակարգողի և Եվրոպական հանձնաժողովի առևտրի գլխավոր տնօրինության միջև<br><br>6. *<u>Զարգացնել այն ինստիտուտների վարչական կարողությունները</u>*, որոնք ներգրավվելու են հնարավոր ապագա ԽՀԱԱՀ-ի բանակցություններում և հնարավոր ապագա համաձայնագրի իրագործմանը, ի թիվս այլոց՝ *<u>ապահովելով նաև հետևյալը</u>*՝<br><br>ա. ՀՀ էկոնոմիկայի նախարարությունն ունի բավարար քանակությամբ բարձր | գրավվածությունը<br><br>20. ԽՀԱԱՀ-ի բանակցային գործընթացում ներգրավված յուրաքանչյուր հաստատությունում/մարմնում (ճյուղային նախարարություններ և պետական կառավարման այլ մարմիններ) նշանակել ճյուղային համակարգող: Համակագողը կարող է լինել մեկ անձ կամ 2-3 անձից բաղկացած փոքր թիմ, որոնք կօգտագործեն մեկ միասնական էլեկտրոնային հասցե: Բոլոր ճյուղային համակարգողները պետք է ունենան անգլերենի գերազանց իմացություն (ներառյալ տեխնիկական տեմինաբանությունը) և ԵՄ-ի ու միջազգային առևտրին վերաբերող հարցերով բարձր որակավորում և փորձ | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br><br>ՀՀ առողջապահության նախարարություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br><br>ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն<br><br>ՀՀ ֆինանսների | |

| | | | |
|---|---|---|---|
| որակավորում ունեցող մասնագետներ, որպեսզի կարողանա արդյունավետ կերպով համակարգել բանակցությունների գործընթացը տեխնիկական մակարդակում<br><br>բ. նշված թիմի բոլոր անդամներն ունեն բավարար գիտելիքներ ԵՄ-ի և միջազգային առևտրի ու ներդրումներին առնչվող օրենսդրության ու ստանդարտների մասին, լավատեղյակ են ԵՄ-ի գործելակերպին և ԽՀԱԱՀ-ի բանակցությունների հետ կապված պահանջներին, ինչպես նաև ունեն անգլերենի իմացության լավ աշխատանքային մակարդակ: Նույնը վերաբերում է այլ ճյուղային նախարարությունների և գերատեսչությունների աշխատողներին, ովքեր զբաղվելու են ԵՄ-ի հարցերով | | նախարարություն<br><br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հար-ցերի նախարարություն<br><br>ՀՀ բնապահպանության նախարարություն<br><br>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն<br><br>ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)<br><br>ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով (համաձայնությամբ)<br><br>ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (համաձայնությամբ) | |

| | | | |
|---|---|---|---|
| | 21. ԽՀԱԱՀ-ի բանակցային գործընթացում ներգրավված յուրաքանչյուր հաստատությունում/մարմնում (ճյուղային նախարարություններ, պետական կառավարման այլ մարմիններ) ապահովել համապատասխան հմտություն-ներով և գիտելիքներով բարձր որակավորում ունեցող մասնագետների առկայությունը՝ հիմնական գերակայու-թյուններին համապատասխան | ՀՀ գյուղատնտեսու-թյան նախարարու-թյուն<br><br>ՀՀ առողջապահու-թյան նախարարու-թյուն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե<br><br>ՀՀ արդարադատու-թյան նախարարու-թյուն<br><br>ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br><br>ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն<br><br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br><br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն | |

| | | | |
|---|---|---|---|
| | | ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>ՀՀ բնապահպանության նախարարություն<br><br>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարություն<br><br>ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)<br><br>ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձնաժողով (համաձայնությամբ)<br><br>ՀՀ ազգային վիճակագրական ծառայություն (համաձայնությամբ) | |
| | 22. Ապահովել հարթ և արդյունավետ համագործակցություն, մասնավորապես, տեղեկատվության հոսքը՝<br><br>22.1. ՀՀ էկոնոմիկայի նախարարության ԽՀԱԱՀ-ի գործընթացի տեխնիկական համակարգող թիմի և բանակցային գործընթացում ներգրավված համապատասխան այլ | ՀՀ գյուղատնտեսության նախարարություն<br><br>ՀՀ առողջապահության նախարարու- | |

| | | | |
|---|---|---|---|
| | մարմինների (ճյուղային նախարարություններ և պետական կառավարման այլ մարմիններ) ճյուղային համակարգողների միջև<br><br>22.2. ԽՀԱԱՀ-ի բանակցային գործընթացում ներգրավված յուրաքանչյուր հաստատության/մարմնի ճյուղային համակարգողի և աշխատողների միջև (ինչը կարող է պահանջել այդ հաստատություններում ներքին կառուցվածքային փոփոխություններ) | թյուն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր ՀՀ ոստիկանություն<br><br>ՀՀ կառավարությանն առընթեր պետական եկամուտների կոմիտե<br><br>ՀՀ արդարադատության նախարարություն<br><br>ՀՀ քաղաքաշինության նախարարություն<br><br>ՀՀ էներգետիկայի և բնական պաշարների նախարարություն<br><br>ՀՀ էկոնոմիկայի նախարարություն<br><br>ՀՀ ֆինանսների նախարարություն<br><br>ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարություն<br><br>ՀՀ բնապահպանու- | |

| | | | |
|---|---|---|---|
| | | թյան նախարարություն<br><br>ՀՀ տրանսպորտի և կապի նախարարու-թյուն<br><br>ՀՀ կենտրոնական բանկ (համաձայնությամբ)<br><br>ՀՀ տնտեսական մրցակցության պաշտպանության պետական հանձ-նաժողով (համաձայնությամբ)<br><br>ՀՀ ազգային վիճակա-գրական ծառայություն (համաձայնությամբ) | |

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ
ՂԵԿԱՎԱՐ Դ. ՍԱՐԳՍՅԱՆ